

սուր զրեց Սալը՝ Պըն Ալիի անոր հրամայելով Մալաթիա քաղաքին շինութիւնը եւ ամբարացումը: Յետոյ յարմար դատեց ուղարկել Ապտըլ-Ուսմանը՝ Իպրահիմ իմամին (կրօնապետ) որդին իբր կառավարիչ Միջագետքի եւ անոր սահմանադրուի քաղաքներուն: Գնաց 140ին (757) հետն ունենալով Հասան Պըն Գահթապա՝ Խորասանցի զինուորներով: Բանակը կազմեց Սիւրիացիներով ու Միջագետքիներով, այնպէս որ իրեն հետ եկան եօթանասուն հազար հողի ու բանակեցաւ Մալաթիայի առջեւ: Արդէն ամէն երկիրներէ դործաւոր հաւաքած էր ու սկսան շինութիւնը: Հասան Պըն Գահթապա երբեմն կը կրէր քարերը դործաւորներուն տալու համար ու սկսաւ կերակրել մարդիկը: Զանոնք կը ճոխացնէր իր դրամով ու ցոյց տալով իր խոհանոցները: Այդ բանը բարկացուց Ապտըլ Ուսմանը՝ որ զրեց Ապու Ճաֆարի իմացնելով թէ ինքը կը կերակրէ մարդիկը: Իսկ Հասան անոր կրկինը կը կերակրէ զինքը զերազանցելու ու վարկը կոտորելու նպատակով, այնպէս որ զինքը նուստ ցուցնէ՝ չուայլութեամբ ու կեղծաւորութեամբ, եւ թէ մունետիկներ ունի մարդերը սեղանի հրաւիրելու: Ապու Ճաֆար պատասխանեց անոր. Ո՛վ տղայ, ինքը Հասան իր դրամով կը կերակրէ մարդերը, մինչ դուն իմ դրամովս կը կերակրես զանոնք, զրա՞ծք կը ցուցնէ կարծամտութիւնը, անհողութիւնը ու գաղափարներու վատութիւնը: Յետոյ նամակ զրեց Հասանի թէ կերակրէ մարդերը, բայց մունետիկ մի՛ դործածեր:

Ալ-Հասան ստէպ սովոր էր ըսել՝ թէ ով որ բարձր պաշտօններ ունի, այսպէս պէտք է ընել: Այն ատեն մարդիկ սկսան ժրջան կերպով աշխատիլ մինչեւ որ լըմընցունին Մալաթիոյ քաղաքին ու մզկիթին շինութիւնը վեց ամիսի մէջ: Իւրաքանչիւր տասը կամ տասնէինգ զինուորի՝ որ հոն բնակեցան՝ շինուեցաւ երկու գետ-

նայարկ ու ւիերնայարկ տուն ու ախոռ մը: Շինեց սահմանապահ ոստիկանատուն մը երեսուն մզկի հեռաւորութեան վրայ եւ ուրիշ ոստիկանատուն մը Գուպաղըպ կոչուած գետին վրայ որ կը թափի Նիւրատի մէջ:

Ալ-Մանսուր Մալաթիայի մէջ բնակեցուց չորս հազար ռազմիկ Միջագետքի, որովհետեւ Մալաթիա Միջագետքի սահմանադրուի քաղաք է: Աւելցուց իւրաքանչիւր մարդուն տրուելիք ռոճիկին վըրայ տասը տինար եւ օգնութիւն հարկը տինար՝ բացի աւարներէ որ ցեղախումբերը իրարու միջեւ կը բաժնէին: Քաղաքը լեցուց զէնքերով ու զինուորներուն տըլաւ պարտէզներ եւ շինեց Գալուտիա բերդը:

Յետոյ եկաւ Կոստանդին կայսրը հարկը հազարէ աւելի զինուորներով, եւ իջաւ Ճիհան գետը: Երբ կայսրը լսեց Արաբներուն բազմութիւնը՝ հեռացաւ անկէ: Լսեցի մէկէ մը որ կը պատմէր՝ թէ Ապտըլ Ուսմանի հետ այս արշաւանքին մէջ կար Նասր Պըն Մալըք ալ-Խուզայի եւ Նասր Պըն Սաու գալիւր՝ Անսարի ազատագիր գետին: Անոր համար բանաստեղծն ըսաւ.

Զքեղ պաշտպանեցին երկու Նասրներ, Նասրը Պըն Մալըք — Եւ Նասրը Պըն Սաու. յաղթանակը թանկագին թող ըլլայ:

141ին (758) Մոհամմէտ Պըն Իպրահիմ արշաւեց Մալաթիայի վրայ Խորասանցի զինուորներով: Անոր պահակազօրքերու գլուխն էր ալ-Մուսայըպ Պըն Զուհայր: Հոն կեցաւ որպէսզի թշնամին աչք չտնկէ քաղաքին: Այն ատեն բնակիչներէն ո՛վ որ դարձած չէր՝ դարձաւ:

Ար-Բաշիտի խալիֆայութեան ժամանակ (786-809) Յոյները արշաւեցին Մալաթիայի վրայ բայց չկրցան առնել: Արշաւեց ետ մղել տուաւ զանոնք ու ջախջախեց (էջ 185-188):

Հ. ԱՐԲԱՆՍՏՄ ԱԴԱՄԵԱՆ

“ Լ. ՎԱՀԱՆ ԵՐԱՆԱՆԵՐԵՐԸ ”

ԼԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԸ ”

Իտալացի ազնիւ գրադէտ մըն է Լ. Թի-զաթոյ որ այսպէս կը ներկայացնէ իր հայրենակիցներուն մեր ծանօթ բանաստեղծը՝ Պարթի մէջ հրատարակուող իտալերէն «Մտածութիւն եւ արուեստ»(1) ամսագրերին մէջ:

Երբ հոս թարգմանաբար կը գետնադնէ եւրոպացի այդ նուրը եւ զգայուն մտքին տողերը մեր բանաստեղծին մասին, հարկ կը համարինք անոր զուգել իտալացի ծանօթ ուրիշ բանաստեղծ գրչի մը արտայայտութիւններն ալ կամ վերլուծումը Հ. Վահանի քերթութեան եւ արուեստի մասին, մանաւանդ որ վերջինիս մէջ կան կենսագրական դժեր եւ այլ յիշատակներ, որոնք կարեւոր են մանաւանդ Հ. Վահանի գրչին դործերուն խորքն եւ իմաստները վերջին կողմերէն: Ըսել կ'ուզենք միջալայրի եւ ապրումներու ներշնչումն եւ ազդեցութիւնները:

Երկու հեղինակներուն ալ անկեղծ վերութիւններ են իսկապէս զնահատելի, եւ բոլորովին ոչ միայն Հ. Վահանին, պատիւ կը բերեն ոչ միայն Հ. Վահանին, այլ նաեւ բովանդակ Հայ ազգին: Ասոր ալ նաեւ բովանդակ Հայ ազգին համար է որ, թէեւ քիչ մը ուշ, սակայն պարտք եւ հարկ կը զգանք մեր հայ ընթերցողներուն նուիրել զանոնք:

Պիտի կանխենք տալ Փիլիպպոս Պաղ-լինիի գրութիւնը որ աւելի ընդարձակ է, եւ ինչպէս ըսինք՝ կենսագրական եւ այլ յուշերով հիւսուած:

Պաղլինին է իտալերէն թարգմանիչը

(1) « Vahan Hovhannessian poeta armeno ». Luigi Tisato « Pensiero ed Arte » է. տարի. Թիւ 1-2 (Յունուար-Փետրուար, 1951), էջ 11-12.

(2) Հրտ. 1930-ին. 264 էջ.

Հայր Վահան Վ.ի քերթութեամբ մը որ « Poesie » տիտղոսով լոյս տեսաւ վանքիս տպարանէն 1947ին, Հ. Վահան Վ.ի ապրիկեան վեցամեայ գերութենէն վերադարձին. եւ աւելցնենք իսկոյն թէ զնահատուեցաւ իտալական մամուլէն:

Իտալական այդ հատորը, միջադիր, 262 էջերէ բաղկացած, կը բովանդակէ քերթութեանը. ցանցառակի առնուած « Հայրենի կրակարան »-էն (2), « Սրտերու երգ »-էն (3) ու « Վանքի ծաղիկներ »-էն (4) եւ աւելի ընդարձակ բաժին մը « Հայկական դիւղ » (5) եւ « Ուղեւճ մարդկութիւն » (6) հատորներէն:

* * *

Ըստ ինքեան հարկ մը չկար մեր կողմէն բան մը աւելցնելու, քանի որ իտալացի երկու հեղինակներն ալ, մանաւանդ Պաղլինի, խորը թափանցած են Հ. Վահանի քերթութեան եւ ձեռնհասութիւն չի պակսիր իրենց արդարօրէն կշռելու զանիկա որպէս արուեստագէտ ու քերթող: Մանաւանդ որ հակիրճ տողերով մենք արդէն ներկայացուցած էինք յարգելի Հ. Վահանը իր քերթողական տաղանդին եւ արուեստին գծերով (7):

Անդրադարձութիւն մը հոս, կրկին անգամ, կը համարիմ որ պարտականութիւն կը դառնայ ինձի շատ մը տիտղոսներով, կը իրեն հայրենակից, միաբանակից եւ 15

(3-4) Հրտ. 1936-ին, մէկ հատորի մէջ, մեծադիր 302 էջ.

(5-6) Երկու հատորներն ալ հրատարակուած 1948-ին՝ Վ. անասուր ծածկանունին տակ. (256, 246 էջ).

(7) « Բազմալեզու », 1930, Օգոստ-Նոյեմ. էջ 245.

տարիներ կրկնակ սուրբ սեղաններու դիմաց սնած ու աճած — տաճարի ու դասարանի մէջ — ըսենք նաեւ վանքի եւ համալսարանի:

Այդ երկար տարիներու լուրջ եւ տրքնաջան աշխատանքին կը պարտի Հ. Վահան Վ. իր խոր հմտութիւնը տոհմային գիտութիւններուն եւ մտաւորական մեծ զարգացումին, որուն փայլ եւ հմայք կու տայ իր լեզուն հոգեւոր յորդութեամբ զեղուն:

* * *

Բնութիւն, միջավայր, դաստիարակութիւն եւ ներշնչումներ են որ անշուշտ կը կերպարանաւորեն տաղանդները:

Հ. Վահան Վ. շատ բարեբախտ եղած է այդ տեսակէտներով:

Հոգի մը զգայուն եւ փենսոնակ, օժտուած զօրաւոր երեւակայութեամբ եւ յիշողութեամբ, եւ միանգամայն հուժկու բնութեան մը ծոցին՝ ինչպիսին է Կովկասը: Մինչեւ 13 տարեկանին ապրած հայրենի հէքիաթային գիւղին մէջ, նահապետական նախանձելի ընտանիքի մը գիրկը, ուսկից առած է այդ խոր ու միաժամ հաւատքը որ կ'արտացոլայ իր քերթուածներու ամէն քայլին, կրօնական ու ազգային դրոշմով մը որ պիտի կատարէ լազարոսէն Ս. Ղազարի մէջ՝ Վենետիկի գիւթական լճակին ծոցը, ուր ապրեցաւ նա Նարեկացիի եւ Ալիշանի պէս աղօթելով ու խոկալով, ներշնչուելով եւ տալուորութեամբ իր անհատական հոգեւոր բովանդակ նկարագրով եւ տեսլականներով, հուսկ պատկուած համալսարաններու մէջ իմաստասիրական ու աստուածաբանական գիտութիւններով, առաքելի մը կեանքն սկսաւ շարժուն եւ բեղուն՝ խօսքի եւ գրչի եւ մանաւանդ սրտի մարդը յայտարարելով՝ որ գիտէ նուիրուիլ առանց վերապահումներու:

Վենետիկ — Հոմ — Փարիզ — Երեւան ու

իր ծննդավայրը (կարմիր վարագոյրէն ներս...), եւ հուսկ Ափրիկէի կիզիչ արեւուն տակ վաստակաւոր եւ գերի եւ գերութեան շրջանին ալ — փաթեւերէ ներս — հաւատքի թեւերով վերամբարձ՝ գիտցաւ աղօթել, խոկալ, կրել ու շղթայուած ազատութեան մէջ փայլիլ մեծ քարոզիչ, մեծ առաքեալ ու մեծ բանաստեղծ:

Հեռաւոր, տխուր եւ անծանօթ Գենիա-յէն իր վերադարձը յաղթանակէ մը աւելի փառաւոր եղաւ Ս. Ղազարի մէջ՝ 1947ին: Չէ՞ որ նա պատերազմի արհաւիրքներուն մէջ՝ հաւատարիմ իր դրօշին՝ խաչ ու աւետարան էր քարոզած հաղար ու բիւր գինուորներու, եւ անոնց հետ արցունքով չաղած կեանքն ու հացը գերութեան, անոնց հետ տառապած, զանոնք կանգնած թշուառ աշխարհի տիղմերէն ու անկումներէն եւ վերացուցած հաւատքով, եւ հուսկ զանոնք հաշտեցուցած իրենց խղճին ու Աստուծոյ հետ:

Ու մնացած է միշտ բանաստեղծ փշաթելերէն ալ ներս, երկնելու համար այս անգամ անապատներու սարսուռին, դադաններու երկիւղին ու կիզիչ արեւուն ու մանաւանդ գերութեան դառնութեան տակ իր փրօնաշունչ եւ հայադրոշմ երկերը, որոնցմէ մին «Հայկական գիւղը» թէեւ հառաչ ու կարօտ եւ վերջիչում, սակայն ափրիկեան արեւի եւ գերութեան տխրութիւնն ունի, ու խոր տխրութիւն մանաւանդ «Խեղճ մարդկութիւն»ը, նոյնպէս հառաչ ու աղօթք, նման աղօթքին անոր՝ որ ամբողջ մարդկութեան մեղքն ու թըշուառութիւնն ողբաց — Նարեկացին:

Քերթուածներ անապատին մէջ ծնած հայ՝ ու խօսուած խաղաղական բարբառով՝ խաղաղական բանակներու մէջ. անոնցմէ սիրուած եւ անոր համար ալ խաղացած:

Մենք չափազանց մօտ ենք Հ. Վահանին, ուստի մեր որակումներն ու գնահատումները թերեւս թեթեւ նշանակութիւն ունենան ոմանց քով:

Մէջտեղն է սակայն մարդն ու իր դործը: Գործ մը համակ երազ, վերացում, աղօթք, կարեկցութիւն, համակ Բնութիւն — Հայրենիք — Աստուած, ինչ որ մեծերու քնարին երբեակը կը կաղմէ, ըսել կ'ուզենք Ալիշանի, Պէշիկթաշեաններու եւ Թումանեաններու:

Հ. Վահան նոր քերթող է, նոր է իր դպրոցը եւ ինքնատիպ իր քերթութիւնը. իր քնարային երգը, մեղմ ու թաւային հնչեակները՝ Թումանեան — Տէրեան դրպրոցի քնքշութիւնն եւ տխրանոյշ քնարն ունին, Ալիշանի պէս զգայուն եւ երբեմն անոր խռովքն ու փոթորիկն ալ ունին՝ երբ Տիգրան — Վարդան — Վահան կու գան իր գրչին տակ բանակներ շարժելու: Կամ երբ ինք դիցական տիպարով ներշնչող դառնայ հայ տղուն՝ զանիկա հերոսներու տիպարին վրայ ձեւելու թափով:

Պիտի ըսենք որ ինք իր պէս յաւէտ թրթռուն է եւ երազող, հարուստ ու զեղուն պատկերներով որ թիւ չունին, որոնք սակայն բնութեան ու երեւակայութեան խառնուրդ են:

Իր զգացումը այնքան յորդ է եւ թըշուրիչ քնքերը այնքան վերասլացիկ՝ որ շատ անգամ արուեստի եւ լեզուի սահմանները քիչ կու գան:

Եւ սակայն միշտ ալ օծութիւն եւ շնորհ կայ անոր քերթութեան մէջ. Աստուած՝ իր անհուն բարութեամբ եւ արարչագործ հանդէպ իր ունեցած սէրն ու պաշտումը: Հէ կարելի գրչի խաղերով ուրուաղծել: Հուսկ Մարդկութիւնը՝ որուն ցաւին մեծ երգին է Հ. Վահան եւ եղբայրութեան պատգամատուն:

Չօպանեան որ դիւրաւ չի շոյլեր տիտղոսներ սքեմաւորներու, ըսաւ, ինչպէս երբեմն յիշեցինք, թէ Հ. Վահան «բանաստեղծ է ամէն բանէ առաջ, ճշմարիտ բանաստեղծ, ջերմ, ինքնաբուխ, թեւաւոր

ներշնչումով... հարազատ դաւակ մը հրեշտակապետական քնարով մեծ Ալիշանին եւ եղբայր մը զիւցազնաշունչ քերթող ողբացեալ Հ. Կարապետ Տէր-Սահակեանի, ու նաեւ Վարուժանին»(8):

Եւ «Յուսարեք»ի յօդուածագիրը(9) որ գինք կ'որակէ «Միթարեան շնորհալի բանաստեղծ» եւ յետոյ «Ահա մի նոր բանաստեղծ: Աստղ մը պայծառ ու դրաւիչ մեր գրական երկնակամարին վրայ: Բեղուն զգացումներով, վարակիչ շունչով, ջերմութեամբ ու թափով հարուստ քնարերգակ մը... Այս անունն ու իր դործը — երկուքն ալ նոր մեղ համար — իրապէս կը կրկնապատկեն մեր ուրախութիւնը: Ահարոնեանը մենք արդէն ունէինք, մեղ վայելք պատճառող իր նոր գիրքն է...: Մինչդեռ «Հայրենի կրակարան»ի նկատմամբ մեր գիւտը երկուք է — թէ գիրքը եւ թէ մանաւանդ ինքը հեղինակը, որ նոր բոցավառուող «կրակարան»ի մը նման կը փռուի հայ հոգիներու եւ հայրենի հողերու վրայ»(10)....:

Ու խօսքը կու տանք խաղաղ բարեկամներուն:

Հ. Ե. Փ.

~ ~ ~

Մինչդեռ այս երկար եւ ոգեսպառ յետապատերազմեան շրջանին մամուլի շարժում մը բոլորովին հտեւէ է հրատարակելու մեր ժամանակն զբաղեցնող նիւթեր, եւ գրավաճառներու ցուցափեղկերը միայն յուշերը կը ներկայացնեն քաղաքագէտներու եւ զօրավարներու համընթաց այն նորութեանց հետ որ կը զբաղին նախանիւթերով եւ աթոմական ուժերով, զանդուածներու դիրքերով, ժողովուրդներու տեղափոխութեամբ, եւ երկիրներու խառնակութեամբ, կարծես ապացուցանելու

(8) «Առաւել», 1930, Յուլ.-Օգ. էջ 109-111.

(9) «Յուսարեք», 30 Օգոստոս 1930.

(10) Անդ, 18 Հոկտ. 1930.

Համար թէ մարդս կորուսած է իր խելքը եւ նիւթապաշտութիւնն անկարող է խաղաղութիւն պարգեւել մարդկութեան, Հայ վանականներու մենաստանի մը տպարանէն՝ որ երկու հարիւր տարիներէ ի վեր նուիրուած է տարածելու բարեպաշտական գործեր եւ թարգմանել աստուածաբանական, իմաստասիրական եւ գրական ուսումնասիրութիւններ, լոյս կը տեսնէ ահա հատոր մը Հ. Վահան Յովհաննէսեանի քերթուածներու, թարգմանուած խալաղական ազատ չափերով՝ Փիլիպպոս Պաղլինիի ձեռքով:

Հայ Մխիթարեաններու մենաստանն է ան, Վենետիկի Ս. Ղազար կղզիին մէջ:

Հատորի մը մէջ ամփոփուած քերթուածները ծնած են ուրիշ կղզիի մը մէջ, արդեալայան անձուկ՝ Ափրիկէի անասման հողամասին մէջ. հողեկան կղզի մը ստուերի եւ լոյսի, ուր բանաստեղծը վեց տարի անցուց իբրեւ քահանայ եւ իբրեւ գերի, մարդոց մէջ որ ապրեցան կարօտովը հայրենիքի եւ կեանքի:

Քահանան եւ առաքեալը, թերեւս մարդկային ո՛ր եւ է էակէ աւելի, կարողութիւնն ունի զգալու հողույն տառապանքները. Հ. Վահան, բանաստեղծ եւ առաքեալ, իրն ըրաւ եւ ապրեցաւ հազար ու հազար էակներու տառապանքները եւ թարգմանեց քնարերգօրէն անոնց բարախիւնները: Քնարերգութիւնը ամբողջապէս տողորուած է այն հողեկան վիճակէն, ուր կը վերապրին անցեալի դէպքերը եւ կը դողան գոյութեան տենչերը: Բարձր բանաստեղծութիւն մըն է, կաղմուած բնազանցութեամբ եւ երաժշտութեամբ, խտացած պատկերներով, թափանցուած գերազանց հոգիէ:

Մենք զայն կ'ողջունենք իբրեւ « հոգւոյ » առաջին արտայայտութիւն՝ ներկայ ժամանակին մէջ որ « նիւթական » է, տիրապետող եւ վեր ու վար ընող: Հակադէպութեան նշան մը որ ցաւէն կու գայ,

որովհետեւ ցաւն է որ կը նորոգէ մարդոց ճամբան եւ մարդկութիւնը աւելի բարի կը դարձնէ:

Մեր դարը պէտք ունի բանաստեղծներու: Բանաստեղծութեամբ աստուածայինն է որ կը վերածնի աշխարհիս մէջ: Մարդոց ատելութենէն, կործանած քաղաքներու աւերակոյտերէն, դառնացանքէն զանգուածներու որ սոյլահար են եւ կը թափառին մոլար դաւանանքներու խաւարին մէջ, հոգին կը փնտռէ եւ կը պատրաստէ իր միակ բայց ճշմարիտ հարստութիւնը:

Մենք շեշտեցինք բանաստեղծութեան այս վերաբերումը: Ատիկա Հ. Վահանի արտադրութեան մէջ՝ վերասլաց աղօթք է առ Աստուած, հաւատաւոր հոգւոյ մը երգն է ուղղուած կեանքին, քահանայ բանաստեղծի մը զգայուն խօսքն է, յոյսի եւ սիրոյ խօսք: Սակայն իսկական բանաստեղծութիւն է, հարազատ յօրինուածքով, բանաստեղծի մը որուն համար նորութիւն չէ յաջողութիւնը, վասնզի Հ. Վահան Յովհաննէսեան քնարերգական քերթուածներու ճոխ արտադրութիւն մը ունի՝ որ արդէն ծանօթ է եւ տարածուած Հայերուն մէջ՝ մեծադոյն քերթողներու հետ, որոնցմէ կը ներշնչուի հայ ժողովրդական անսպառ եւ բեղուն բանաստեղծութիւնը:

* * *

Հայաստան յարաբերութեան շատ կէտեր ունի Իտալիոյ հետ: Գլխաւորները՝ ժողովրդեան փոթորկալից դէպքերը, իր զուակներու դաղթը դէպի բոլոր աշխարհ, ցեղին յարումն իր հայրենի հողին, կրօնքի եւ հայրենիքի մարտիրոսները եւ ասիէ առջ ցեղին քնարերգական հոգին, որպէս թէ բանաստեղծութիւնը ամէնէն արժանաւոր պահապանն ըլլայ ազգային հոգւոյն: Հայաստան, պէտք է ըսել, աւելի մօտ է Միջերկրականի քան թէ Սեւ ծովուն:

Նշանակելի բան է որ այս արեւելեան աշխարհը հին դարերէ ի վեր առեւտրական, դիւանագիտական եւ մշակութային յարաբերութեան մէջ է Վենետիկի հետ, եւ թէ այդ յարաբերութիւնները, հազար առիթներու մէջ ամրապնդուած, երբեք չխղուեցան: Այս բարեկամութեան աւանդութիւնը կ'ըլլէ մինչեւ փառահեղ շրջանները Վենետիկոյ Հասարակապետութեան, եւ կ'աճի պատերազմներու ատեն թուրքերուն դէմ՝ որոնք հասարակաց դարաւոր թշնամիներ են:

Մարկոս Միանիի ժամանակ, որ Պետրոս դուքսին որդին էր, Քորֆուի եւ Կրետէի տիրապետողը, ճշմարիտ դաղթականութիւն մը զարգացաւ Ադրիականի դըշխոյին մօտ:

Ս. Յունիսնոսի մօտ թաղ մը կոչուեցաւ անունովը Հայ քաղաքի մը(1) զոր կործանեց Շահ Աբաս: 1496ին, Հայոց թաղին(2) մէջ, ուր ասոնք նախ հիւրատուն մը ունէին իրենց ազգակիցներուն համար, շինուեցաւ եկեղեցի մը՝ նուիրահամար, շինուեցաւ եկեղեցի մը՝ նուիրահամար, Ս. Խաչին: Հետագայ դարերուն, ուսած Ս. Խաչին: Հետագայ դարերուն, վենետիկցիներու ասպնջականութիւնը անվինջ հետքեր կը ձգէ հայերու սրտին մէջ: ջինջ հետքեր կը ձգէ հայերու սրտին մէջ:

Հայ տարադիրներու հարցը 1700ին ըսկիզբը պիտի արձանագրէր Վենետիկ ժամանումը Մխիթար Աբբասօր – հմուտ եւ մանուկ Մխիթար Աբբասօր – հմուտ եւ գիտնական մարդ, սրբութեան համբաւով – որ փախած էր թուրքերու հալածանքէն:

Վենետիկեան պերճապայծառը (Հասարակապետութիւնը) այն ատեն շնորհեց

(1) Կ'ակնարկէ Ջուզան, որուն անունով S. Maria Formosa (Խորոտիկ Աստուածածին) եկեղեցւոյն մօտ փողոց մը կը կոչուի Calle Giuffa (Giulfa), ուր կը բնակէին իսկապէս Վենետիկի հին Հայ դաղթականները 1500-1700ին:

(2) Կ'ակնարկէ Calle degli Armeni, ուր մինչեւ օրս կանգուն է Հայ դաղթականներու շինած Ս. Խաչ եկեղեցին՝ Մխիթարեան Միաբանութեան հողածութեան տակ: Ջքնաղ եկեղեցեակը գեղեցիկ

ընդ միշտ Մխիթարի Ս. Ղազարու կղզիին որպէսզի հոն իր կրօնաւորական հասարակութեամբ շարունակէր ծառայել Աւետարանի, կրթութեան եւ հայրենասիրութեան դործը:

Մխիթար կերպարանափոխեց ամայի կղզիին, հոն հիմնեց վանքը՝ որ իր ժամանակ շինուեցաւ եւ աւարտեցաւ 1740ին: Այն ժամանակ Ս. Ղազար ակնանտես եղաւ ծաղկումին եւ ընդարձակումին – նախ վենետիկեան Հանրապետութեան յետոյ իտալական պետութեան պաշտպանութեան տակ – Մխիթարեան Հայրերու Միաբանութեան, որ այսօր ունի դպրոցներ եւ որբանոցներ Արեւելքի մէջ եւ Իտալիոյ:

Ս. Ղազարու մէջ, այդ հիւրընկալ հողին վրայ՝ որ իբրեւ նոր հայրենիք դարձած է, յետ կեանքի մը – զոր բաւ եւս երկնքի փառքին մէջ կարելի էր երգել – նման անոր որ

մարտիրոսութեան ծառայով
գոռոգ սուլքամին առջեւ
Քրիստոսը փարգեց

կը վերջացնէր իր երկրաւոր կեանքը բանաստեղծ Մխիթարը՝ կտակելով Կարդ մը որուն կը հետեւին գիտնական հայ վարդապետներու խումբ մը:

* * *

Հ. Վահան Յովհաննէսեան, ծնած Ախալցխա(3), զետեղուած լեռներու ետեւը

նկարներով եւ մարմարեայ երեք ճոխ խորաններով՝ շինուած է ԺԳ դարուն վերջերը, նորոգուած ու մեծցած 1675ին, որու դուռի մէջ կը դրուի հին դաղթիկ հոգաբարձուներուն եւ երեւելիներուն գերեզմանները հայ եւ լատին կրկին արձանագրութիւններով:

(3) Իսկապէս Ախալցխա քաղաքին մօտիկ Ծղալթիկա գուարթ եւ պողաշատ գիւղը՝ անունով վրացի (տաք ջուր) բայց բնակիչներով ամբողջապէս հայ:

Պաթոմի նաև հանդես էր գալիս, 1894-ին. 14 տարեկանին մինակը ճամբորդելով Հարա-
ւային Ռուսիոյ եւ Աւստրիոյ վրայով, հե-
տեւելով կրօնաւորական կոչման, հասաւ
Վենետիկ: Միտիթարեան Հայրերու մենաս-
տանին մէջ կատարեց դիմնադիրոնի եւ լի-
կէոնի ուսումները: 1916-ին Հոռոմ զրկուե-
ցաւ Ծաւալոցի միջնակարգի վարժարանը
ուր իմաստասիրութեան վարդապետի
դասինն ստանալէն յետոյ անցաւ Գրիգոր-
եան համալսարան եւ հոն պատկուեցաւ
վարդապետ աստուածաբանութեան:

Քահանայ ձեռնադրուած վերադարձաւ
Վենետիկ, իբրեւ ուսուցիչ հայ մատենա-
դրութեան եւ Պատմութեան Մուրատ -
Ռափայէլեան վարժարանին մէջ. Հաստա-
տութիւն մը դարձ մ'աւելի կանգուն հայ
սերունդներն առաջնորդելու արհեստագի-
տական եւ դիտական ուսումներու, յետոյ
մասնագէտներ դառնալու համար:

Հ. Վահան Վենետիկէն անցաւ Միլան
նման վարժարանի մը մէջ, յետոյ կրկին
Վենետիկ ստանձնելու համար խմբագրու-
թիւնը «Բազմալեզու»-ի, որ հայ պարբերա-
կաններու հնագոյնն է դիտական եւ դրա-
կան նկարագրով:

Տարի մը յետոյ զրկուեցաւ Փարիզ, Հայ
մեծ վարժարանը (Մուրատեան), ուր
տեսչի օգնական եղաւ եւ ուսուցիչ Հայ-
կական մատենագրութեան:

Կրօնաւորներու ճակատագիրն է ճամ-
բորդել. եւ Հ. Վահան 1937-ին, Իտալա-
կան պետութեան խնդրանքին վրայ, զըր-
կուեցաւ Ատտիս Ապեպա վարելու համար
հայ վարժարանը նոյն քաղաքին, որ իտա-
լացիներու հոն մուտքին 1936-ին, հաղար
հոգիի հասնող հայ գաղութ մը ունէր:

Վենետիկ մէջ գոյութիւն ունեցող ազ-
նուական աւանդութիւնը իտալացիներու
եւ հայերու միջեւ՝ կը շարունակուէր Ատ-
տիս Ապեպայի մէջ, ուր հայ հասարակու-
թիւնը, որ օտար հասարակութեանց մէջ
բազմաթիւն էր, նպաստաւոր կլիմայ մը

դտաւ արդիւնաբեր աշխատանքի Ապրիկէի
այդ մասին մէջ:

Ատտիս Ապեպայի մէջ էր որ եւ ճանչ-
ցայ Հ. Վահանը, հայերու համախմբու-
թեան մը մէջ, ուր նա իր հեռաւոր հայ-
րենիքի քաղաքացիներուն խօսեցաւ Վե-
նետիկոյ եւ Ատտիս Ապեպայի մասին:

Պատերազմը Հ. Վահանը դտաւ իբրեւ
տեղակալ քահանայ՝ Ս. Մարկոս հիւան-
դանոցին կապուած:

Ունենալով նա իտալական քաղաքացի-
ութիւն՝ անգլիական գրաւումի պահուն՝
հետեւեցաւ ճակատագրին իտալացի դին-
ուորներուն՝ որոնք Քենիայի արդեաւիակ
կայանները փոխադրուեցան: Շուրջ վեց
տարի նա ապրեցաւ իտալացի դերիններուն
հետ կայանէ կայան անցնելով եւ միշտ,
անխոնջ, կատարելով Քրիստոսի քահա-
նայի անձնուէր սրաշտոնը:

Մեծ դադարներն եղան Պուրկուրէթի եւ
Լոնտիանիի կայաններուն մէջ եւ ձիւնձի-
այի որոնք ականատես եղան ծանր եւ ցա-
ւաղին անցքերուն՝ Քենիայի գերիններու
կեանքին:

Արդիւնաւէտ է դործը այս առաքելին,
որ ամէնուն ցաւին կցորդ եղած է արթն-
ցնելու համար. շատ մը ցաւաղին հոգինե-
րու մէջ՝ խոկումը, իղձեր եւ յուշեր եւ
հաւատք Ատտուծոյ վրայ, անոնց որ ամէն
օր սպաննալիքի տակ էին անտարբերու-
թեան եւ վհատութեան: Լոնտիանիի եկե-
ղեցին, յուշարձան հաւատքի որ կը յաղ-
թանակէ կասկածներու եւ ցաւերու վրայ,
եւ կը ցրուէ խաւարը լուութեան հոգինե-
րու տրամի մը մէջ, դործն է Հ. Վահանի:

Արդեւափառման կայաններուն մէջ, ուր
կը ճանչցուին եւ կը չափուին մարդիկ,
սորվեցայ սիրել մարդը որ երբեք չտըր-
տընջեց եւ որ նուիրեց՝ առանց բան մը
խնդրելու իրեն համար: Այն առթիւ էր
որ ճանչցայ բանաստեղծը:

Ամէն գերի նոր կեանք մը շինած էր ի-
րեն համար, կեանք մը որ դուրս կ'ելլէր

փշաթել շրջափակէն եւ կը շրջէր ժամա-
նակին մէջ եւ այն հեռաւոր վայրերը
ուսկից բաժնուած էր: Հ. Վահանի միւս
հոգին բանաստեղծինն էր: Նա կայանին
վերեւ կաղմած էր ընդարձակ երկինք մը՝
ուր հոգին չի դողար: Երեկոյեան ժամե-
րուն, տաժանելի օրէն վերջ, երբ ծանր
մտածութիւնները կը մեղմանային եւ
կ'արթնային համր վերջիւումները եւ
յոյսերը կարօտ դարձած, բանաստեղծը
կը թռչէր զԱստուած փնտռելու:

Ես լոյսին հետ երգեցի
Հովուի աղբատ սրբիգով,
Եւ իմ յանգիստ հիւսեցի
Արեգակին շողերով:

Թանձր ըստուերներ երբ իջան
Աղբիւրներու երեսին,
Ես քամապետ տրամուրեան՝
Լոյս վառեցի իմ հոգին:

Սէր է հոգին երգերուս
Բոցերու պէս երկարող,
Ներքեւ խուկ եւ զըմուռ
Սրտերու մէջ տառապող:

Այսպէս կ'երգէ բանաստեղծը իր
քերթութեան հատորին մէջ՝ զոր տպա-
գրութեան կը յանձնէ: Բայց իր բոլոր
բանաստեղծութիւններու հաւաքածոն տո-
ւորուած է կրօնական զգացումով: Բնա-
դանցական եւ իմաստասիրական իմաստ-
ները, որոնցմով հոն է այս դործը, կրօ-
նական խանդավառութեամբ թափանցիկ
են: Ամէն երկրաւոր բան վերէն դիտուած
է, ձեւով, պատկերներով եւ զգացումով.
վերէն՝ ուր շարունակ կը թեւածէ Աստու-
ծոյ խոկումը. բայց որովհետեւ սէրը,
ընտանիքը, թոչունները, զիւղերը, առ-
ուակները, ծառերը, անասունները, աստ-
ղերը Ատտուծոյ արարած են, բանաստեղծը
կ'երգէ զանոնք:

Ինքնատիպ են բոլորովին, լի նահապե-
տական ճաշակով եւ հնչուն խօսքերով խը-

տացած՝ քնարերգութիւնները Հայաստա-
նի վրայ: Վերջիւումը հայրենի գիւղին եւ
իր բարձր լեռներու՝ ծածկուած մայրինե-
րով, ուր կ'ապրի իր ցեղը եւ ուր բար-
բերը փոխուած չեն նիւթապաշտական
քաղաքակրթութիւններու նորոյթին եւ
գեռ կը տեւեն երգերն ու քերթուածները,
ուժգին աղագած են հեղինակին հոգւոյն
վրայ: Թերեւս գեղեցկագոյն քերթուած-
ները «Հայկական գիւղ»-ինն են: Ասոնց
մէջ «Հասկաքաղ» աղջիկը: Թէեւ բոլոր
գործը ընտիր է:

Ընդարձակ հորիզոն մըն է որ աղօթք եւ
խոկում կը թելադրէ, կ'ամփոփէ տկար-
ներուն աղաղակը, մանուկներու եւ մար-
դոց երազը հոգեկան մաքրութեամբ, սի-
րոյ յուշերը, պանդուխտին բարախները
հեռաւոր հայրենիքին համար, եւ ամէն
ինչ կը կերպարանափոխէ սիրոյ հեւքի մը:

Հաւաքածոն խմբերգ մըն է աղօթքնե-
րու, բարախուն աղիք մը որ երկրաւոր
կղզիէն կը բարձրանայ եւ կը ծաւալի
մարդկային հորիզոններէն անդին:

Քերթուածներուն թարգմանութիւնը
յանձնուած Փիլիպպոս Պաղլինիի՝ մեծա-
պէս յաջող գործ մըն է: Շատ դժուարին
գործ, որովհետեւ հարկ եղած է աղատ
չափերու վերածել քնարերգութիւնը ար-
ձակ դարձած՝ հոգ ունենալով բառերուն
հաւատարմութեան եւ անոր նախնական
երաժշտականութեան: Պատլինի, ինքն ալ
բանաստեղծ, ներշնչուած է Լէոնարտեան
կէտոյթներէն:

Վերստին կարդալով այս քերթուածնե-
րը զոր մի առ մի կը կարդայինք երբ
Պաղլինի զանոնք կը յարասէր, այսօր կ'ե-
րեւան ներդաշնակ բովանդակութեան մը
մէջ:

Եւ այսօր կարդալով զանոնք վերստին՝
երբ ցաւը մոռցուած է եւ ընտանեկան սէ-
րը դտնուած, մեղի կրկին ճաշակել տուաւ
մեր կրած դառնութիւնները, կարծես որ
շարունակուելով հանդերձ գերիին վհա-

տուրիւնը հայրենիքի ցաւերուն եւ աշխարհի ապագային անստուգութիւններուն նկատմամբ, բարձրանալով բանաստեղծութեամբ՝ կարելի է դնել վերստին հաւատքը լաւագոյն ապագայի մը մասին:

* * *

Հ. Վահան Յովհաննէսեան որ 1917-էն սկսած է գրել հայ թերթերուն մէջ, իր առաջին ոտանաւորները հրատարակած է 1930-ին՝ «Հայրենի կրակարան» տիտղոսով, մեծ յաջողութիւն գտնելով իր աշխարհին մէջ: 1939-ին լոյս տեսան քերթուածներու երկու(4) հատորներ, մէկը «Սրտերուն երգը», եւ միւսը «Վանքի ծագիկներ» տիտղոսով, որոնք զինքը Հայ դասական քերթողներու համբաւին արժանացին:

«Երգեր», «Սեղծ մարդկութիւն», «Հայկական դիւղը», «Մանուկներու պարտէզին մէջ»(5) ընդ մամուլ են բնագրին լեզուով [հայերէն]:

Կը մաղթենք Հ. Վահանին որ իտալական տպագրութիւնը այն յաջողութիւնը ունենայ որուն արժանի են ինքը եւ արուեստագէտ Պաղլինի:

Հ. Վահան Ս. Ղազար դարձած, վերստին ճամբայ կ'իյնայ դէպի աշխարհ, ինչպէս առաքեալներու օրէնքն է, սահմանուած իբրեւ դաստիարակ Միջին Արեւելքի Հայոց մէջ:

Որոնք որ զինքը ճանչցան՝ պիտի չմոռնան, թէպէտեւ նա մեզի կրկնէ թէ երկիրս ստուերներու թաղաւորութիւնն է, եւ թէ իրականութիւնը անդեհականին մէջ է:

Ֆ. Ճ. Փի22ԻՆԵԻ

(4) Երկուքն ալ մէկ հատորի մէջ:

(5) Ասոնցմէ լոյս տեսած են 1948ին «Հայկական դիւղը» եւ «Սեղծ մարդկութիւն» հատորները միայն:

* * *

Արժանաւոր եւ փրկարար բան է սիրել բանաստեղծները, որովհետեւ եթէ խակապէս այդպէս են, այսինքն բանաստեղծ առանց վերագրելիներու, ամէն ժամանակ անոնք Աստուծոյ եւ մարդուն միջեւ շաղկապումի լուսաւոր օղակներ կը դառնան: Իրենց խօսքը կենդանի խորհրդանշան է կոյր եւ վշտահար մարդկութեան փրկութեան համար, եւ անոնց նուազը համբույր մըն է որ կ'ընդգրկէ բոլոր արարածները անդերկրեան վերացումի մը համար:

Իսկ եթէ, ընդհակառակն, բանաստեղծ մը ըմբռնելու համար ստիպուինք դիմել յայտարարութիւններու, ժողովականերու, խմբակներու, որովհետեւ առանց անոնց անհասկնալի պիտի մնար մեզի անոր լեզուն, պէտք է իսկոյն եղբակացներ թէ ատիկա մեծամտի մը կերկերոտ ձայնն է եւ կամ թէ իր դործը տարօրէն յղացումն է քմահաճ երեւակայութեան մը:

Հետեւաբար մենք կողմը չենք ուրիւններու (ismes) կամ լաւատես մեկնաբանութեան, հնարանութեան, վերացականութեան եւ նմաններու — որոնք անդրալպեան անյաջող ձեւերու վատասերումներ են — այլ կը փնտռենք արուեստագէտին դործին մէջ յաւերժական գեղեցիկին նըշանները: Գեղեցկութիւնը դոր կը նշմարենք իրաւունք նրբերանդներուն մէջ Հայաստանի երգիչի մը՝ Հ. Վահան Յովհաննէսեանի:

Բանաստեղծ որ կը ճանչնայ բարբառը այն մեծ եղբոր որ Հրանտ Նազարեանցն է, ուրիշ դտարիւն դաւակ մը նահատակ Հայաստանի: Յովհաննէսեան ինքն ալ մեզի կը հասնի զրեւոտաւորուած խորհրդապաշտ եւ արեւայեղծ Արեւելքի հանդերձանքով:

Իր բանաստեղծութիւնը պատգամն է սիրոյ եւ հաւատքի, նա միայն լոյսին համար կ'երգէ. իր խօսքը միշտ պիտի ունենայ:

նայ խոր իմաստ մը մարդկային եւ կրօնական. իր ներշնչման աղբիւրները պիտի ըլլան միշտ նուրբ զգացումներ՝ որոնց ծագումը մասնաւորապէս հոգեկան ամենամաքուր թաղաւորութեան ծոցն է:

Հազիւ ստացանք իր «Բերթուածները» (Ս. Ղազարու Հայկական տպարանէն) իր մէջ ողջունեցինք ձայնը բարեկամ՝ որուն մէջ կրնայինք մենք դմեղ նշմարել, մենք որ ամէն օր կ'իյնայինք ու կը կանգնէինք, շարունակ կ'ողբայինք ու կը հառաչէինք: Եւ իսկոյն չնորհակալ եղանք իրեն:

Բայց շատ անգամներ կարդացինք իր երկը, զանիկա ուսումնասիրեցինք, եւ վերջապէս հաճոյք է մեզի արտայայտել այն շարժառիթները որոնց համար կը դմայինք անոնց վրայ:

Ես լոյսին հետ երգեցի
Հովուի աղբաւ սրբիմզով,
Եւ իմ յանգեալ հիւսեցի
Արեգակին շողերով:

Ահա բոլոր Հ. Վ. Յովհաննէսեանը, իր աշխարհը: Զքնաղ աշխարհ՝ որովհետեւ բարձր, ուսկից բանաստեղծը կը ծօի ակնարկ մը տալու աշխարհի անցուղարձին:

Թանձր ըստուերներ երբ իջան
Աղբիւրներու երեսին,
Ես քրտապետ տրամուրեան՝
Լոյս վառեցի իմ հոգին:

Եւ ահա մարդը, ան ալ ծնրադիր: Միշտ ձեռքը սակայն այն վառ լապտերը՝ որով հետզհետէ պիտի յաղթէ խաւարին՝ դէպի ապահով տիրապետութիւնը լոյսի թաղաւորութեան:

Այս բանաստեղծին մէջ մենք կը գըտնենք ինքնատպութիւն: Ինքնատպութիւն՝ զոր կը յատկանշէ մասնաւորապէս շարունակական ուժգին կոչը ուղղուած հոգիին, նախական ուժգին կոչը ուղղուած հոգիին մը՝ լեցուած զօրեղ շունչով մարդկութեան, բայց միշտ թեթեւ ու պատկառմունքով: Այս մեր բանաստեղծն

ալ պիտի երգէ անշուշտ կենդանիները, աստղերը, դաշտերը, առուները, սէրը, ընտանիքը, բայց լոկ այն տեսակէտով՝ որ ամէնքն ալ ստեղծուածներն են այն հոգի, քաղցր Աստուծոյ՝ որուն մտածութիւնը կը թեւածէ իր հոգեկան աստեղափայլ աշխարհին մէջ:

Երբեք կանգ պիտի չառնէ անիծելու այն ճակատագիրը որ շատ անգամ կը դժնէ աշխարհը վրայ, այլ պիտի ըսէ մեզի թէ «ո՛չ մէկ հառաչ դուր կը ցնդի»: Յաւը սակայն իր մէջ պիտի բարձրանայ հասնի իրեւ զերազոյն շարժառիթ արուեստի՝ որ կը վերջանայ ներդաշնակ աստիճանաւորումին մէջ երկնային իրերու:

Նա պիտի չմեղանչէ ոճի պշտանքով՝ երբ հոգիացնէ վիպական կամ գրեթէ գեղարանական պատկերներ, պիտի չհասնի յանդգնութիւններու «ամէն գնով» ինչպէս այսօրուան նորոյթն է — այլ իր բոլոր տըւածը պիտի ըլլայ ամէնէն անկեղծ ալալկերպութիւնը այն յուզումներուն զոր ըզգացած է:

Նա պիտի ըսէ ընթերցողին իր «Ես ու դուն»ին մէջ:

Դուն ինձ խորհուրդ մ'ես համակ
Ես առեղծուած մը բեզի:

Ահա կանգնած դէմ դիմաց
Ինչպէս երկինք եւ ովկեան,
Մենք իրար մէջ անդրադարձ
Եւ անհաղորդ յախտեան:

Ասոնք յաջող իմաստներ են. բայց մեր (բանաստեղծը) եղբակացներով վերլուծումը որոշ մտածումի մը, պիտի աւելցնէ:

Թերեւս մենք հանդիպինք
Յառաջացող գարունին,
Կամ շիրմի մէջ հեռաւոր...
Խօսքեր ունիմ հեշտաւետ
Փրախըսալու ականջիդ:

տուրիւնը հայրենիքի ցաւերուն եւ աշխարհի ապագային անստուգութիւններուն նկատմամբ, բարձրանալով բանաստեղծութեամբ՝ կարելի է դնել վերստին հաւատքը լաւագոյն ապագայի մը մասին:

* * *

Հ. Վահան Յովհաննէսեան որ 1917-էն սկսած է գրել հայ թերթերուն մէջ, իր առաջին ոտանաւորները հրատարակած է 1930-ին՝ «Հայրենի կրակարան» տիտղոսով, մեծ յաջողութիւն գտնելով իր աշխարհին մէջ: 1939-ին լոյս տեսան քերթուածներու երկու(4) հատորներ, մէկը «Սրտերուն երգը», եւ միւսը «Վանքի ծագիկներ» տիտղոսով, որոնք զինքը Հայ դասական քերթողներու համբաւին արժանացին:

«Երգեր», «Սեղծ մարդկութիւն», «Հայկական դիւղը», «Մանուկներու պարտէզին մէջ»(5) ընդ մամլով են բնագրին լեզուով [հայերէն]:

Կը մաղթենք Հ. Վահանին որ իտալական տպագրութիւնը այն յաջողութիւնը ունենայ որուն արժանի են ինքը եւ արուեստագէտ Պաղլինի:

Հ. Վահան Ս. Ղազար դարձած, վերստին ճամբայ կ'իյնայ դէպի աշխարհ, ինչպէս առաքեալներու օրէնքն է, սահմանուած իբրեւ դաստիարակ Միջին Արեւելի Հայոց մէջ:

Որոնք որ զինքը ճանչցան՝ պիտի չմոռնան, թէպէտեւ նա մեզի կրկնէ թէ երկիրս ստուերներու թաղաւորութիւնն է, եւ թէ իրականութիւնը անդենականին մէջ է:

Ֆ. Ճ. Փի22ԻՆԵԻ

(4) Երկուքն ալ մէկ հատորի մէջ:

(5) Ասոնցմէ լոյս տեսած են 1948ին «Հայկական դիւղը» եւ «Սեղծ մարդկութիւն» հատորները միայն:

* * *

Արժանաւոր եւ փրկարար բան է սիրել բանաստեղծները, որովհետեւ եթէ խակապէս այդպէս են, այսինքն բանաստեղծ առանց վերագրելիներու, ամէն ժամանակ անոնք Աստուծոյ եւ մարդուն միջեւ շաղկապումի լուսաւոր օղակներ կը դառնան: Իրենց խօսքը կենդանի խորհրդանշան է կոյր եւ վշտահար մարդկութեան փրկութեան համար, եւ անոնց նուազը համբույժմուն է որ կ'ընդգրկէ բոլոր արարածները անդերկրեան վերացումի մը համար:

Իսկ եթէ, ընդհակառակն, բանաստեղծ մը ըմբռնելու համար ստիպուինք դիմել յայտարարութիւններու, ժողովականերու, խմբակներու, որովհետեւ առանց անոնց անհասկնալի պիտի մնար մեզի անոր լեզուն, պէտք է իսկոյն եղբակացենք թէ ատիկա մեծամտի մը կերկերոտ ձայնն է եւ կամ թէ իր դործը տարօրէն յղացումն է քմահաճ երեւակայութեան մը:

Հետեւաբար մենք կողմը չենք ուրիւններու (ismes) կամ լաւատես մեկնաբանութեան, հնարանութեան, վերացականութեան եւ նմաններու — որոնք անդրալպեան անյաջող ձեւերու վատասերումներ են — այլ կը փնտռենք արուեստագէտին դործին մէջ յաւերժական գեղեցիկին նըշանները: Գեղեցկութիւնը դոր կը նշմարենք իրաւունք նրբերանդներուն մէջ Հայաստանի երգիչի մը՝ Հ. Վահան Յովհաննէսեանի:

Բանաստեղծ որ կը ճանչնայ բարբառը այն մեծ եղբոր որ Հրանտ Նազարեանցն է, ուրիշ զտարիւն դաւակ մը նահատակ Հայաստանի: Յովհաննէսեան ինքն ալ մեզի կը հասնի զբնաստուորուած խորհրդապաշտ եւ արեւայեղծ Արեւելի հանդերձանքով:

Իր բանաստեղծութիւնը պատգամն է սիրոյ եւ հաւատքի, նա միայն լոյսին համար կ'երգէ. իր խօսքը միշտ պիտի ունենա

նայ խոր իմաստ մը մարդկային եւ կրօնական. իր ներշնչման աղբիւրները պիտի ըլլան միշտ նուրբ զգացումներ՝ որոնց ծագումը մասնաւորապէս հոգեկան ամենամաքուր թաղաւորութեան ծոցն է:

Հազիւ ստացանք իր «Բերթուածները» (Ս. Ղազարու Հայկական տպարանէն) իր մէջ ողջունեցինք ձայնը բարեկամ՝ որուն մէջ կրնայինք մենք դմեղ նշմարել, մենք որ ամէն օր կ'իյնայինք ու կը կանգնէինք, շարունակ կ'ողբայինք ու կը հառաչէինք: Եւ իսկոյն չնորհակալ եղանք իրեն:

Բայց շատ անգամներ կարդացինք իր երկը, զանիկա ուսումնասիրեցինք, եւ վերջապէս հաճոյք է մեզի արտայայտել այն շարժառիթները որոնց համար կը դմայինք անոնց վրայ:

Ես լոյսին հետ երգեցի
Հովուի աղփառ սրբիգով,
Եւ իմ յանգեալ հիւսեցի
Արեգակին շողերով:

Ահա բոլոր Հ. Վ. Յովհաննէսեանը, իր աշխարհը: Զքնաղ աշխարհ՝ որովհետեւ բարձր, ուսկից բանաստեղծը կը ծօի ակնարկ մը տալու աշխարհի անցուղարձին:

Թանձր ըստուերներ երբ իջան
Աղբիւրներու երեսին,
Ես քրտապետ տրամուրեան՝
Լոյս վառեցի իմ հոգին:

Եւ ահա մարդը, ան ալ ծնրադիր: Միշտ ձեռքը սակայն այն վառ լապտերը՝ որով հետզհետէ պիտի յաղթէ խաւարին՝ դէպի ապահով տիրապետութիւնը լոյսի թաղաւորութեան:

Այս բանաստեղծին մէջ մենք կը գըտնենք ինքնատպութիւն: Ինքնատպութիւն՝ զոր կը յատկանշէ մասնաւորապէս շարունակական ուժգին կոչը ուղղուած հոգիին, նախական ուժգին կոչը ուղղուած հոգիին մը՝ լեցուած զօրեղ շունչով մարդկութեան, բայց միշտ թեթեւ ու պատկառմունքով: Այս մեր բանաստեղծն

ալ պիտի երգէ անշուշտ կենդանիները, աստղերը, դաշտերը, առուները, սէրը, ընտանիքը, բայց լոկ այն տեսակէտով՝ որ ամէնքն ալ ստեղծուածներն են այն հոգի, քաղցր Աստուծոյ՝ որուն մտածութիւնը կը թեւածէ իր հոգեկան աստեղափայլ աշխարհին մէջ:

Երբեք կանգ պիտի չառնէ անիծելու այն ճակատագիրը որ շատ անգամ կը դժնէ աշխարհը միայն, այլ պիտի ըսէ մեզի թէ «ո՛չ մէկ հառաչ դուր կը ցնդի»: Յաւը սակայն իր մէջ պիտի բարձրանայ հասնի իրեւ զերազոյն շարժառիթ արուեստի՝ որ կը վերջանայ ներդաշնակ աստիճանաւորումին մէջ երկնային իրերու:

Նա պիտի չմեղանչէ ոճի պշտանքով՝ երբ հոգիացնէ վիպական կամ գրեթէ գեղարանական պատկերներ, պիտի չհասնի յանդգնութիւններու «ամէն գնով» ինչպէս այսօրուան նորոյթն է — այլ իր բոլոր տըւածը պիտի ըլլայ ամէնէն անկեղծ աշխարհայութիւնը այն յուզումներուն զոր ըզգացած է:

Նա պիտի ըսէ ընթերցողին իր «Ես ու դուն»ին մէջ:

Դուն ինձ խորհուրդ մ'ես համակ
Ես առեղծուած մը բեզի:

Ահա կանգնած դէմ դիմաց
Ինչպէս երկինք եւ ովկեան,
Մենք իրար մէջ անդրադարձ
Եւ անհաղորդ յախտեան:

Ասոնք յաջող իմաստներ են. բայց մեր (բանաստեղծը) եղբակացելով վերլուծումը որոշ մտածումի մը, պիտի աւելցնէ:

Թերեւս մենք հանդիպինք
Յառաջացող գարունին,
Կամ շիրմի մէջ հեռաւոր...
Խօսքեր ունիմ հեշտաւէտ
Փրախըսալու ականջիդ: